ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

https://doi.org/10.59982/18294359-25.1-vt-08

Վահե Աշոտի Թորոսյան
ի.գ.թ., դոցենտ, դոկտորանտ
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
Vaxinak91@mail.ru

Ամփոփագիր

Գիտական հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության շրջանում ստեղծված *«Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միության»* գործունեությանը՝ առավելապես շեշտադրելով նրա հիմնադիր և նախագահ, իրավաբանական գիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Բաղդասարյանի գիտական ժառանգության վերլուծությունը: Ուստի հոդվածում առանձին մենագրությունների և դասագրքերի ներկայացմամբ ամբողջական անդրադարձ է կատարվել և համակողմանիորեն ուսումնասիրվել:

Ուսումնասիրելով հայրենի իրավագիտությունը՝ պարզ դարձավ, որ նորանկախ շրջանում դրա մի զգալի հատված մշակվել և ստեղծվել է Ա.Բաղդասարյանի կողմից և նրա ջանքերով: Նրա հեղինակած մենագրությունները, դասագրքերը, գիտական և հրապարակախոսական հոդվածները, իրավունքի տարբեր բնագավառներին առնչվող աշխատությունները այսօր էլ նվազ կարևորություն չեն ներկայացնում: Ժամանակների հեռվից դրանցում արտահայտված վերլուծությունները և մասնագիտական դատողությունները զգալիորեն փոխվել են՝ պայմանավորված գործող օրենսդրության փոփոխություններով և իրավունքի զարգացմամբ, մի բան, որը ներհատուկ է գիտությանը: Այդուհանդերձ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության նորագույն շրջանում իրավաբան-գիտնականների մշակած հայեցակարգերի, հրապարակած գիտական արդյունքների և այս բնագավառում ունեցած այլ նշանակալի ձեռքբերումների ուսումնասիրությունը և ամփոփ վերլուծությունը մեծապես կխթանի հայ իրավաքաղաքական մտքի ժամանակակից պատկերի ամբողջացմանը:

Հիմնաբառեր. Իրավագետների և քաղաքագետների միություն, դատախազություն, դատարան, իրավապահ մարմիններ, ոստիկանություն, սահմանադրություն, իրավաքաղաքական միտք:

Ներածություն

Ա. Բաղդասարյանի իրավագիտական ժառանգությունը.

1985 թվականին Ա. Բաղդասարյանը իրավաբանական մեկամյա դասընթացներ է անցնում Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում, որից հետո ընդունվում է ԵՊՀ իրավաբանության ֆակուլտետ: Խորհրդային բանակում ծառայելուց հետո 1994 թվականին Մոսկվայում Ա.Բաղդասարյանը պաշտպանում է իրավաբանական գիտությունների հայցման թեկնածուական ատենախոսություն՝ *«Դատախազական հսկողության հետագա արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը»* թեմայով *[Багдасарян, Государственно-правовой статус]* Այնուհետ ՀՀ կառավարության ուղեգրով դառնում Մոսկվայում գործող ղեկավար աշխատողների կառավարման ակադեմիայի հեռակա բաժնի ունկնդիր *[**Բաղդասարյան,** «Դատախազության մարմինների աշխատանքների]:* Երկու տարի անց Արթուր Բաղդասարյանը ՌԴ նախագահին կից պետական ծառայության ակադեմիայում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ *«Դատական և իրավապահ մարմինների սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում»* [Багдасарян, Конституционный статус] վերտառությամբ՝ դառնալով ամենաերիտասարդ գիտությունների դոկտորը նորանկախ Հայաստանում *[Օրենք և իշխանություն, 1996 նոյեմբեր, դեկտեմբեր, #5-6 (7), 12]*:

Նկ. 1



Ա.Բաղդասարյան,Դատախ-ազություն, հիմնահարցեր, փորձ, անելիքներ

Նշված աշխատությունը երիտասարդ գիտնականի անդրանիկ գիրքն էր, որտեղ հանգամանորեն անդրադարձ էր կատարվում դատախազության համակարգին՝ որպես պետաիրավական գործունեության տարատեսակ, նրա գործունեության հիմնական սկզբունքներին, հսկողության տեսակներին, փուլերին, իրավական ներգործության միջոցներին և այլն: 1994 թվականն էր, նորանկախ Հանրապետությունը դեռ չուներ Սահմանադրություն, ճյուղային օրենսդրությունը սաղմնավորման փուլում էր, հետևապես գիտական նմանատիպ աշխատանքները իրավաստեղծ գործունեության համար կարևոր աղբյուր էին հանդիսանում: Այն ուշագրավ փորձ էր նոր կառուցվող հասարակարգում պետական այդ ինստիտուտի գործառույթների և խնդիրների հստակեցման առումով: Անկախության ձեռք բերումից ի վեր պետական գույքի մասնավորեցման կամ սեփականաշնորհման հախուռն և կամայական գործընթացը հրատապ էր դարձնում արդյունավետ վերահսկողության իրականացումը: Հանրային սեփականության և ունեցվածքի դեմ հանցավոր ոտնձգությունների իրականացման, հանրային շահերի պաշտպանության նպատակով առավել քան ընդգծվում էր օրինականության ռեժիմի և նորմատիվային հենքի ապահովումը:

ԽՍՀՄ փլուզումից և խորհրդային կարգերի հրաժարումից հետո ձևավորված նոր կացութաձևը՝ իր սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական նոր վերնաշենքով նախանշում էր նաև պետության մեխանիզմի արմատական վերափոխում: Խորհրդային Հայաստանից անցումը՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության տեղի ունեցավ ոչ թե առկա ժառանգության սահուն փոխանցմամբ, այլ դրա կտրուկ բացառմամբ և նորի անորոշ ակնկալությամբ:

Պահպանելով ԽՍՀՄ ժառանգության մարման իներցիան՝ պետությունը ըստ էության հայտնվեց ամբողջական վակուումի մեջ: Նախկին սոցիալիստական համակարգի փլուզումը առաջ բերեց նորանոր խնդիրներ

և հրապուրիչ դարձան ամեն ինչ հապճեպ փոխելու և աղճատելու փորձերը: Ա. Բաղդասարյանը այս առումով պետք է կարևորեր համալիր միջոցառումների և աստիճանական ռեֆորմների իրագործումը, ոչ թե հնի իսպառ բացառումը, այլ դրա արդիականացումը և պատշաճ վերափոխումը՝ գիտակցելով, որ տասնամյակներ են պետք նոր համակարգի ձևավորման համար. *«հարկավոր է սթափ դատողությամբ ստեղծել այնպիսի իրավական դաշտ, ինչը հարիր է մեր պետականության ոգուն և ազգային նկարագրին» [Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 5]*:

Օրենսդրության կատարելագործումը և իրավական ոլորտի բարեփոխումները մեծապես կախված են այն կրթօջախներից, որոնք պատրաստում են իրավաբան մասնագետներ, ինչպես օրինակ՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, որտեղ աշխատող մասանգետները տարիներ շարունակ կադրեր են թողարկել Հանրապետության իրավապահ համակարգի բոլոր օղակների համար: Բայց հեղինակի մտահոգությունն այն էր, որ եթե *«արագորեն չթարմացվեն ուսումնական ծրագրերը, չբարձրացվեն առանձին դասախոսների գիտական մակարդակը և դասախոսությունների որակը, ապա առաջիկայում իրավաբան կադրերի խնդրում կարող ենք ունենալ շատ ավելի լուրջ բարդություններ, քան այսօր» [Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 10]*: Ա. Բաղդասարյանը առաջարկում էր ֆակուլտետի հենքի վրա ստեղծել ինքնուրույն իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատություն, որը պետության անմիջական օժանդակությամբ կապահովի որակյալ մասնագետների պատրաստումը, այդ թվում նաև՝ դատախազության բնագավառում:

Հրատապ էր հանցավոր միջավայրի հստակ վերլուծությունը, դրանց նախադրյալների և սոցիալ-իրավական պատճառների վեր հանումը: Հանցագործությունների արագ և լրիվ բացահայտումը ենթադրում է նախաքննության և հետաքննության մարմինների նկատմամբ արդյունավետ դատախազական վերահսկողություն և այդ մարմինների գործողությունների կոորդինացում: Հեղինակի կողմից առանձնացվում և առանձին կերպով քննարկվում են դատախազական հսկողության չորս ուղղություններ, այդ թվում՝ ա) հետաքննության և նախաքննության մարմինների, բ) քրեական և քաղաքացիական գործերի քննության և լուծման, գ) ուղղիչ աշխատանքային հիմնարկների նկատմամբ հսկողություն և գ) ընդհանուր հսկողություն:

Ըստ որում, յուրաքանչյուրը կոչված է իրականացնելու տվյալ ճյուղին բնորոշ դատախազական հսկողություն: Այս համատեքստում խորքային անդրադարձ է կատարվում պետական մեղադրանքի պաշտպանությանը, հակահիրավական դատական ակտերի վերանայմանը, պետական շահերի պաշտպանության հայցի հարուցմանը և այլն:

Հանցանք կատարած և պատիժը կրող քաղաքացիների ազատազրկման և նրանց իրավական կարգավիճակի հիմնախնդիրները և դրանցում դատախազության դերը ևս կարևոր են: Պատժի նպատակը, ի վերջո, հանցագործի մեկուսացման միջոցով նրա վարքի ուղղումն ու վերադաստիարակումն է: «Ուղղել» նշանակում է հիմնովին վերացնել անձի բացասական հատկանիշները, նրա հակաօրինական և հակաբարոյական գործողությունները կամ անգործությունը, իսկ «վերադաստիարակել» նշանակում է մարդուն վերստին դաստիարակել՝ քրեորեն պատժելի արարքների հնարավոր կրկնությունը բացառելու համար: Դատախազական հսկողությունը այս ոլորտում կոչված է լինել դատապարտյալների իրավունքների և պարտականությունների իրականացման երաշխավորը, որպեսզի ապահովվեն նրանց կենսապայմանները, ուսման, աշխատանքի հնարավորությունները, կանխվեն քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի հնարավոր կամայականությունները *[Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 141]*:

Դատախազի գործունեությունը իր էությամբ և դրսևորման ձևերով պետք է սահմանվի օրենքով, իսկ օրենքը լայն հաշվով դա ժողովրդի կամքի արտահայտությունն է: Դատախազության անկախությունը նրա ինքնուրույն և անկաշկանդ գործունեության հուսալի նախապայմանն է, որը ենթադրում է հատկապես կենտրոնական մարմինների ազդեցության արգելք: Պետք է ասել, որ ՀՀ գլխավոր դատախազը նախքան սահմանադրության ընդունումը հաշվետու էր ՀՀ գերագույն խորհրդին:

Ա. Բաղդասարյանը առաջ էր քաշում դատախազության վերահսկողության կոորդինատորի գաղափարը. *«Այսօր մեր Հանրապետությունում գործում են ստուգիչ և վերստուգիչ ֆունկցիաներով ու լիազորություններով օժտված բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ոչ միայն գործարար աշխարհի, այլ նաև հասարակայնության միանգամայն արդարացի բողոքի ու վրդովմունքի տեղիք են տալիս» [Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 49]*: Առևտրային ընկերության գործունեությունը ստուգվում էր տասնյակից ավելի տեղային և համապետական տեսչական կառույցների կողմից, ինչը, անշուշտ, չէր կարող նպաստել շուկայական հարաբերությունների զարգացմանը: Վերահսկողության համակարգումը բխում է անհարկի վարչարարությունը նվազեցնելու, պաշտոնական դիրքի չարաշահումները վերացնելու հանգամանքից: Հաճախ էր պատահում, որ դատախազությունը որևէ ընկերությունում ստուգում իրականցնելիս, հանկարծ պարզում էր, որ իրենից առաջ արդեն իսկ կատարվել է համապատասխան ստուգում:

Հատուկ ընդգծվում էր դատախազական հսկողությունը՝ որպես բարձրագույն հսկողություն և մենաշնորհային հատկություն դիտելու մոտեցումը *[Բաղդասարյան,*

Դատախազություն, հիմնահարցեր, 195], ինչը տվյալ ժամանակներին զարգացող նորամուծություններից էր և գիտական բանավեճի արդիական թեմա: Հերքելով նշանավոր իրավագետ Վ. Մ. Սավիցկու տեսակետը և հենվելով հայտնի այլ իրավագետների տեսակետների վրա, փորձ էր արվում հիմնավորել, որ դատախազությունը, թեև բարձարգույն պետական մարմին չէ, այդուհանդերձ նրա իրականացրած հսկողությունը իր բնույթով բարձր է կանգնած հսկողության մյուս ձևերից: Բացի այդ, այն իրականացվում էր բարձրագույն մարմնի անունից և հաշվետու է նրան: Անշուշտ, հեղինակի այս տեսակետը միտված էր իրավաքաղաքական խորացող ճգնաժամում ընդգծել իրավապահ համակարգում կառույցի ունեցած վերահսկողական գերակայությունը: Ուստի դատախազությանը նման ազդեցիկ, նույնիսկ, կարելի է ասել «արտակարգ» լիազորություններով օժտելու նպատակը թողտվությունները և կամայականությունները զսպելու և օրենսդրական բացերի պատճառով ինքնագործունեությունը կանխելու քայլ էր. *«Բարձրագույն հսկողություն ՀՀ-ում անհրաժեշտություն է և կարող է դրսևորվել իբրև կարևորագույն պետահրավական երաշխիք՝ բոլոր բնագավառներում օրինականության ապահովման, օրենքների ճիշտ ըմբռնման և կատարման գործընթացում» [Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 208]*: Ահա այստեղ է դրսևորվում դատախազության յուրօրինակ բնույթը. *«իր տարածքով փոքր, ազգային խառնվածքով և ինքնատիպությամբ առանձնացող Հայաստանի Հանրապետության բարձրագույն հսկողության գաղափարի տերմինի ընդունման անհրաժեշտությունը բխում է մեր պետականության առջև ծառացած բազմաթիվ դժվարություններից» [Բաղդասարյան, Դատախազություն, հիմնահարցեր, 211]*:

Իհարկե, հաշվի առնելով ներկայումս խորհրդարանական վերահսկողության և սահմանադրական վերահսկողության դերը, կարծես թե *«դատախազական բարձրագույն վերահսկողության»* վերոնշյալ պնդումը մեր օրերում կորցնում է իր արդիականությունը, սակայն չպետք է նաև անտեսել այն հանգամանքը, որ 1994 թվականին դեռ գոյություն չուներ սահմանադրական դատարան, չկար խորհրդարանական վերահսկողության ձևավորված համակարգ և նախկին Գերագույն խորհրդի վերահսկողական գործառույթները ամենևին նման չէին ներկայիս Ազգային ժողովի վերահսկողության բնույթին և էությանը:

Վերջում հարկ է նշել, որ աշխատության գրախոսները՝ ի.գ.դ. պրոֆեսորներ Ի. Յացենկոն և Ն. Ափյանը փաստում էին, որ հայերենով նման աշխատություններ հրատարակվել էին դեռ նախորդ դարի 70-ականներին: *«Հատկապես Հայաստանի Հանրապետությանը պատուհասած դժնի այս օրերին, երիցս ողջունելի է երիտասարդ գիտնականի քայլը՝ նոր խոսք ասել իրավագիտության բնագավառում, ձեռնոց նետել քարացած շատ ընկալումներին և, ավելին, մինչ այս «կոմունիստական» շղարշով ներկայացված որոշ տեսակետներ նորովի լուսաբանելով, լույս սփռել արհեստականորեն կաղապարված գաղափարների վրա» ... հանձնին*

Ա.Վ. Բաղդասարյանի իրավաբանական գիտությունը ձեռք է բերում մի նոր նվիրյալ, որը խոսք ունի ասելու այս բնագավառում»:

Ուշագրավ է, որ աշխատությունը բարձր է գնահատել ՀՀ պետական նախարար **Վազգեն Սարգսյանը**. «Առաջին քայլը միշտ սկիզբ է. Այս անգամ՝ խոստումնալից սկիզբ՝ «Դատախազություն. Հիմնահարցեր, փորձ, անելիքներ հինգհատորյա ժողովածուի հեղինակի համար: Ողջունելով նրա այս քայլը, մաղթում եմ, որ երիտասարդ մեր գիտնականները նոր լիցք ստանան դրանից և միշտ հիշեն, որքան էլ բարդ լինի ապրածդ ժամանակը, ստեղծագործ պրպտուն միտքը չի կարող և չպետք է նիրհի: Այո, հատկապես մեր օրերում, երբ երիցս դժվար է նման մենագրության պատրաստումն ու հրատարակումը: Սակայն, ինչպես իր այս գրքով ապացուցում է Արթուր Բաղդասարյանը, մասնագիտություն ընտրելը քիչ է: Հարկ է նաև մտահոգվել դրա զարգացմամբ՝ գիտության խորքերը թափանցելու և այնտեղ նորանոր ծալքեր հայտնաբերելու մղումով»:

Այստեղ համառոտ ներկայացվում էր աշխարհի մի շարք երկրների փորձը դատախազական մարմինների համակարգի վերաբերյալ: Արտասահմանյան երկրների, այդ թվում՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի առաջադեմ փորձի տեղայնացումը, նոր ձևավորվող հասարակարգի և օրենսդրության պայմաններում, էական անհրաժեշտություն էր Հայաստանի համար:

Նկ. 2



Ա. Բաղդասարյան, Դատախազությունը աշխարհի մի շարք երկրներում

Հեղինակը դատախազությունը տեսնում էր առավելապես գործադիր իշխանության համակարգում՝ ՀՀ նախագահի անմիջական ենթակայության ներքո *[Բաղդասարյան, Դատախազությունը աշխարհի մի շարք երկրներում, 59]*: Դատախազությունը՝ որպես կենտրոնացված և միասնական համակարգ, նաև պետք է հսկողություն իրականացի նախագահի հրապարակած իրավական ակտերի նկատմամբ: Նախագահի ներքո գործելը չպետք է դատախազությանը կաշկանդի իր բարձրագույն հսկողությունը անաչառ և օբյեկտիվ իրականացնելիս՝ անկախ կուսակցական և գերատեսչական միջամտություններից:

Ա. Բաղդասարյանը ընդգծում է. *«Առանձին երկրներում քաղաքական քաոսը, հասարակության առանձին շերտերի բարոյական և իրավական դեգրադացիան, ազատությունը փոխարինեցին ամենաթողությամբ, որն էլ բազմաթիվ դժբախտությունների պատճառ դարձավ: Այս պայմաններում չափազանց կարևորվում է իրավապահ մարմինների հավասարակշռված գործունեությունը, քանզի իրավունքն ու օրենքը՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող, մեծ խնդիրներ ունեն օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում»[Բաղդասարյան, Դատախազությունը աշխարհի մի շարք երկրներում, 42]*:

Նկ. 3.

Ա. Բաղդասարյան, 117 Հարց ու պատասխան

Գիրքը մեր նորանկախ պետության սահմանադրության թերևս առաջին համապարփակ մեկնաբանություն էր՝ տարբեր երկրների փորձը ամբողջացնող իրավահամեմատական վերլուծությամբ: Առանձին հոդվածների վերաբերյալ մեկնաբանություններով հանդես էին եկել փորձառու իրավաբան-գիտնականներ, պետական և հասարակական գործիչներ, այդ թվում՝ Վլադիմիր Նազարյանը, Հենրիկ Խաչատրյանը, Գագիկ Ջհանգիրյանը, Վահե Ստեփանյանը, Գեղամ Ղարախանյանը, Հովհաննես Ստեփանյանը, Սամվել Մուրադյանը, Կարապետ Ռուբինյանը և այլք: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո օրակարգային խնդիրը նոր սահմանադրության ընդունումն էր. «երբ ժողովուրդը հանրաքվեի միջոցով հռչակում է իր անկախությունը, և նոր ստեղծված պետությունն իր ձեռքն է վերցնում այդ ժողովրդի կյանքի ու ապագայի համար պատասխանատվությունը, նախ և առաջ անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու ազգային խառնվածքին բնորոշ և նպատակներին հարիր հասարակական-քաղաքական կարգ, անհրաժեշտ պետական կառույցներ և դրանց համապատասխան օրենսդրական դաշտ...» [Բաղդասարյան, 117 հարց ու պատասխան, 3]:

Սահմանադրության տեքստի մշակման համար 1990թ. նոյեմբերի 5-ին ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահությամբ *[Խաչատրյան, 17]:* Սահմանադրության առաջին այլընտրանքային նախագիծը ներկայացվեց 1992թ. Հենրիկ Խաչատրյանի կողմից, որի մի շարք դրույթներ հաշվի առնվեցին նոր Սահմանադրության մեջ: Հետագայում ներկայացվեց ՀՅԴ նախագիծը, որը ներշնչված էր ՀՅԴ ծրագրով, որտեղ Սփյուռքի գաղթօջախները ևս դառնում էին պետության ակտիվ դերակատարներ: Իհարկե, ամենաընդգծված ներդրումը սահմանադրության ստեղծման, գիտագործնական և հայեցակարգային դրույթների հստակեցման առումով ունեցավ Վլադիմիր Նազարյանը, որին երբեմն անվանում են նորանկախ պետության սահմանադրության հայր *[Նազարյան, 128]*:

1995 թվականի հուլիսի 5-ին հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով ընդունեց Սահմանադրություն՝ հռչակելով ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն կառուցելու իր հանձնառությունը: Միջազգային իրավական փորձի և ազգային որոշ առանձնահատկությունների համադրությամբ՝ նոր սահմանադրությունը իսկապես կարողացավ հուսալի հենք ստեղծել օրենսդրության ձևավորման և հետագա կատարելագործման համար: Ա. Բաղդասարյանը նկատում է. *«1995 թ. հուլիսի 5-ը անկախ պետականության և զարգացման ինքնիշխան ուղի որդեգրած մեր Հանրապետության, մեր պետականության ու ժողովրդի համար մեծ կարևորությամբ է օժտված: Այդ օրը համաժողովրդական քվեարկության ճանապարհով, հայ ժողովուրդն ընդունեց, իր երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, դրանով իսկ ամրագրելով ազատ և ժողովրդավարական հասարակարգ կառուցելու իր անսասան վճռականությունը: Առանց նոր Սահմանադրության, առանց ժողովրդի ազատ կամքի արտահայտության ճանապարհով ամրագրված կարևորագույն իրավաբանական*

երաշխիքի, հնարավոր չէր լինի իրականացնել մեր ազգային դարավոր բաղձանքը և կերտել անկախ պետականություն» [Բաղդասարյան, Հարությունյան, 5]:

Իրավական և քաղաքական մշակույթի կայացման և վերաիմաստավորման փուլում գտնվող Հայաստանում նոր մեկնարկ էր ստացել պետականաշինությունը և իրավաստեղծ գործունեությունը: Իսկ առանց Սահմանադրության և վերջինիս համակողմանի պարզաբանման նշված գործընթացների արդյունավետությունը խոցելի էր:

Վստահաբար կարող ենք արձանագրել, որ Արթուր Բաղդասարյանի նախաձեռնությամբ և համակարգմամբ մասնագիտական խմբի կողմից ներկայացված սահմանադրության դրույթների մեկնաբանությունները առանցքային դեր ունեցան ՀՀ սահմանադրության տառի և ոգու ընկալման, իրավանորմերի պատշաճ լուսաբանման, անհայտ և անմատչելի մի շարք եզրույթների մասնագիտական լուսաբանման հարցում: Սահմանադրության հետագա առավել ստվարածավալ մեկնաբանությունները [ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ], ի դեպ, որի որոշ հոդվածների մեկնաբանությունը իրականացրել էր Ա. Բաղդասարյանը, պետք է կարծել նախ և առաջ հենվել են հենց այս աշխատության վրա:

Իհարկե հեռու ենք այն մտքից, որ մեր Սահմանադրությունը որակապես լիովին բավարարեց իրավական և ինքնիշխան պետություն դառնալու մեր ձգտումները և լուծեց մեր բոլոր խնդիրները: Վառ վկայությունը մեր երեսունամյա պետության արատներն ու ձախողումներն են: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունը ուներ բոլոր բավարար հիմքերը և նախադրյալները ամուր և կենսունակ պետության կայացման համար: Ուստի նրա զարգացմանը պետք է հետևեր Սահմանադրության դրույթների առարկայացումը և կենսագործումը՝ սահմանադրականությանը, որը, ցավոք շարունակում է մնալ ապագայի բարի ցանկություն:

Նկ. 4.



Ա.Բաղդասարյան, Դատարանը, դատախազությունը և ոստիկանությունը աշխարհի մի շարք երկրներում

Այս գրքում ևս, արտասահմանյան երկրների արդարադատության համակարգի և իրավապահ մարմինների առաջատար փորձի ուսումնասիրությամբ ցուցանշվում էին ՀՀ օրենսդրության կայացման նոր միտումները: Իրավահամեմատական անդրադարձ էր կատարվում ՀՀ սահմանադրության և աշխարհի մի շարք երկրների արդարադատական և իրավապահ համակարգերի միջև: Վեր էին հանվում դատավորի կարգավիճակի, նրա անկախության երաշխիքների, անձեռնմխելիության, դատական մարմինների աստիճանակարգության առանձնահատկությունները՝ ՌԴ-ում, Իտալիայում, Ճապոնիայում, Բելգիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Շվեյցարիայում, Հունաստանում, Իռլանդիայում, ԱՄՆ-ում: Մի կողմից ցույց էր տրվում դատարանի, դատախազության և ոստիկանության մարմինների հարաբերական ինքնուրույնությունը և անկախությունը, մյուս կողմից

դրանց սերտ կապը և փոխգործակցությունը: Ավելորդ չէ նշել, որ իրավապահ համակարգի մարմինների կոորդինատորի առանցքային դերը վերապահված էր դատախազությանը: Իսկ առանց կանխատեսելի իրավական իրականության և իրավական որոշակիության, բարդ է ինստիտուցիոնալ զարգացումը. *«Որքան ճկուն են օրենքները և, որ չափազանց կարևոր է՝ պետության ու ժողովրդի շահերն արտահայտող ու մարդու իրավունքներն ամրապնդող, այնքան ավելի սահուն և կառավարելի է դառնում երկրի կայացման և զարգացման գործընթացը» [Բաղդասարյան, Դատարանը, դատախազությունը և ոստիկանությունը, 21]*:

Նկ. 5



Ա.Բաղդասարյան, Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում

Նորանկախ Հայաստանում ոստիկանությանը վերաբերող առաջին համակողմանի ուսումնասիրությունը՝ հիմնված արտասահմանյան երկրների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Ռուսաստանի հիմնական օրենքների և ոստիկանական գործունեությունը կարգավորող օրենսդրության վրա, թերևս հանդիսանում է այս աշխատությունը: Հեղինակի համոզմամբ. *«նորանկախ մեր Հանրապետությունում այսօր առաջնային ու հրատապ է նոր իրավական նորմերի ստեղծումը, որի ճանապարհին անընդունելի ենք համարում ամեն ինչ հապճեպ ու հապշտապ փոխելու, աղճատելու կոչերը»* [Բաղդասարյան, Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում, 3]:

Ներկայացվում էր միջազգային քրեական ոստիկանությունը՝ Ինտերպոլը, մեկնաբանվում միջազգային հետախուզման տեսակները, սահմանվում էին միջազգային հանցագործության հասկացությունը և բնութագրիչները՝ որպես առավել բարձր վտանգավորությամբ օժտված և կազմակերպված հանցագործության տարատեսակ: Հանցանքի սուբյեկտները՝ օժտված լինելով բարձր պրոֆեսիոնալիզմով, ֆինանսական և տեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներով ու սոցիալական կապերով՝ անհամեմատ դժվարացնում են նման հանցանքների դեմ մղվող պայքարը: Առանձին դեպքերում միջազգային հանցավոր խմբավորումները սերտաճում են իրավապահ համակարգի մարմինների հետ [*Բաղդասարյան, Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում, 13]*:

Անդրադառնալով ոստիկանության խնդիրներին հասարակական կարգի պահպանության ոլորտում, Արթուր Բաղդասարյանը նշում էր, որ հասարակական կարգը իր լայն բովանդակությամբ ընդգրկում է հասարակական բոլոր կապերն ու հարաբերությունները, որոնք կարգավորվում են ինչպես իրավունքի, այնպես էլ բարոյական նորմերով [*Բաղդասարյան, Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում, 193]*:

Գիրքը հրատարակվել էր Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միության և ՀՀ ներքին գործերի նախարարության համագործակցության արդյունքում, որի առնչությամբ հեղինակը իր խորին երախտագիտությունն էր հայտնում ՀՀ ներքին

գործերի նախարար Վանո Սիրադեղյանին՝ գրքի հրատարակման գործում ցուցաբերած գործնական աջակցության համար:

Այս աշխատությունը ևս իր տեսակի մեջ յուրահատուկ էր, քանի որ մասնագիտական տիրույթում հայերենով գրեթե չկային նման ուսումնասիրություններ: Գրքում նախանշվում էին հարկային համակարգի արդիականացման և հարկատուների շահերի պաշտպանության գործնական առաջարկներ: Հարկային արդյունավետ քաղաքականության իրականացման հարցը կարևորվում էր հատկապես ոչ բավարար իրավական կարգավորումների, օրեցօր աճող գների, արտադրատնտեսական

Նկ. 6



Ա.Բաղդասարյան, Հարկային մարմինների պետահրավական կարգավիճակը և գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

հարաբերությունների կտրուկ անկման, դրամի արժեզրկման, պետական բյուջեի աճող դեֆիցիտի, ի վերջո՝ ժողովրդի կենսամակարդակի նվազման և սոցիալական լարվածության ավելացման համապատկերում: ՀՀ-ում արդեն իսկ ընդունվել էր «Հարկերի և տուրքերի մասին» օրենքը, որում սահմանվում էին հարկի հասկացությունը, տեսակները, հարկային մարմինների կառուցվածքը, վերահսկողական գործառույթները, հարկ վճարողների իրավունքներն ու պարտականությունները:

Սակայն Հանրապետությունում գործում էին ստուգիչ և վերստուգիչ գործառույթներով բազմաթիվ կազմակերպություններ. *«անժխտելի է, այն իրողությունը, որ հարկային մարմինների աշխատանքներում առկա թերությունները բխում են այդ աշխատանքների ոչ հստակ կազմակերպումից ու ղեկավարումից» [Բաղդասարյան, Հարկային մարմինների պետահրավական կարգավիճակը, 19]:* Հատկապես ներպետական մակարդակում բացակայում էր աշխատանքի անհատական պլանավորումը, որի էությունը աշխատողի, տվյալ պարագայում հարկային ծառայողի իրավասության ներքո գտնվող աշխատանքի, ծրագրերի և միջոցառումների կանոնակարգումն է, մի բան որը լայնորեն կիրառվում է ժամանակակից աշխարհում: Դա ենթադրում էր նաև ստորադաս մարմինների և հարկային տեսուչների հաշվետվությունների մեխանիզմի առկայություն *[Բաղդասարյան, Հարկային մարմինների պետահրավական կարգավիճակը, 26]*:

Այս առումով հարկային մարմինների աշխատանքի արդյունավետ կազմակերպման և պատշաճ կադրային քաղաքականության իրականացման համար կարևորվում էր «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կամբողջացներ հարկային մարմինների պետահրավական կարգավիճակը. *«Գործուն հարկային համակարգի, կայուն հարկային օրենսդրություն ունենալու պարագայում էապես կկրճատվի ստվերային էկոնոմիկայի օրեցօր աճող ազդեցությունը տնտեսության ամենատարբեր ճյուղերում, իսկ հարկային մարմինների կողմից նպատակամետ հարկային քաղաքականության իրականացման պարագայում հարկը հիրավի*

տնտեսության զարգացման կարևորագույն խթան կհանդիսանա» [Բաղդասարյան, Հարկային մարմինների պետահիրավական կարգավիճակը, 3]:

Ինչ վերաբերում է հարկային հսկողությանը, այն առաջնահերթ կարևորություն է ձեռք բերում պետության ողջ տարածքում միասնական հարկային օրինականություն ապահովելու գործում, այդ թվում նաև՝ հարկային իրավախախտումների դեմ մղվող պայքարում: *[Բաղդասարյան, Հարկային մարմինների պետահիրավական կարգավիճակը, 57]*:

«Գործող հարկային համակարգը թույլ է տալիս ընթանալ դեպի մեր պետության և հասարակության առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը՝ կուտակման տարբեր ֆինանսական միջոցների հաշվին: Սակայն այս ճանապարհին հարկ է նաև հաշվի առնել հարկատու հանդիսացող սոցիալական տարբեր խմբերի վճարունակության հարցերը՝ լիարժեքորեն ապահովելու համար հարկային համակարգի ճկունությունը և հաշվի առնելով զարգացում ապրող հասարակական հարաբերությունները: Ժամանակը և այս բնագավառում կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ գործող հարկային համակարգը կատարելագործման անհրաժեշտություն ունի: Ձեռք բերածը զարգացնել է հարկավոր, այլապես տնտեսական բարեփոխումների առաջընթացը կարող է վտանգի տակ դրվել» [Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, 104]:

Նախագահի ինստիտուտի մասին նորանկախ Հայաստանում իրավական առաջին ուսումնասիրություններից մեկն այս աշխատությունն էր, որտեղ ընդգծվում էր նախագահի՝ որպես Հայաստանի Հանրապետության կայացման և զարգացման առանցքային ինստիտուտի կարևորությունը: Պետության կայուն զարգացման համար լավագույն կառավարման մոդելը իշխանությունների բաժանման հենքի ներքո լայն լիազորություններով օժտված նախագահի ինստիտուտն էր՝ անհատական, այլ ոչ թե տարրալուծված պատասխանատվությամբ: Հատկապես կիսանախագահական կառավարման ձևում նախագահը օժտված է բավական լայն իրավասություններով.

Նկ. 7

Ա. Բաղդասարյան, Ա. Հարությունյան, ՀՀ նախագահի սահմանադրահիրավական կարգավիճակը

«նախագահը գերագույն իրավարարն է այն բոլոր հիմնահարցերում, որոնք ծառանում են կառավարության առջև: Նա է կրում հրատապ միջոցառումներ ձեռնարկելու պատասխանատվությունը, երբ պահանջվում է անհապաղ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարել» [Բաղդասարյան, Հարությունյան, 17]:

1996 թվականի նախագահական ընտրությունների կազմակերպման և անցկացման գործում կարևոր էր «Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Մեզանում միշտ քննարկվել է այն հարցը, թե մեզ պետք է առհասարակ ուժեղ նախագահի ինստիտուտ թե՞ ոչ, քանի որ լայն լիազորություններով օժտված նախագահը կարող է իշխանության ուզուրպացման և բռնապետության

հաստատման նախադրյալներ ստեղծել: Մինչդեռ մեր պետության աշխարհաքաղաքական դիրքը, վարչատարածքային բաժանման առանձնահատկությունները, ունիտար կառուցվածքը և բնակչության միատար կազմը թելադրում են ունենալ նախագահի ինստիտուտ, որի առնչությամբ Ա. Բաղդասարյանը նշում է. *«ուժեղ նախագահը ենթադրում է ուժ և կենտրոնաձիգ իշխանություն, բնականաբար, նաև ուժեղ պետականություն: Դարերի խորքից եկող մեր ազգային ավանդույթները, իր նկարագիրը պահպանելու կարողությունը, բոլոր տեսակի փորձությունների դիմակայելու ունակությունը ևս հուշում են, որ ՀՀ-ն պետք է ունենա ուժեղ և անկախ նախագահ» [Ավանգարդ, 1996, ապրիլ, № 6]:*

Աշխատությունում հեղինակների կողմից վերլուծության էին ենթարկվում և համակողմանի մեկնաբանվում նորանկախ պետության սահմանադրությունը, դրանում առկա սահմանադրական հիմունքների համակարգը, իշխանությունների տարանջատումը, մարդու հիմնական իրավունքները և պետության բնութագրիչները՝ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության հայեցակարգերը և այլն:

1996 թվականի նախագահական ընտրություններում Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միությունը սատարեց Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը [Օրենք և իշխանություն, 1996, սեպտեմբեր, #4, 4]: Միության կազմակերպած կոնֆերանսներից մեկում, որը կրում էր *«Նախագահական ընտրություններ. իրավական և քաղաքական ասպեկտները»* խորագիրը, բանախոսներ՝ Ա. Բաղդասարյանը, Մ. Մարգարյանը, Մ. Շահգելդյանը, Ֆ. Թոխյանը, Ա. Հարությունյանը և ուրիշներ՝ ամփոփելով նախագահական ընտրությունները և հետընտրական բուռն զարգացումները՝ արձանագրում էին հասարակական և քաղաքական կոնսենսուսի և սոցիալական գործընկերության անհրաժեշտությունը:

Նկ. 8

Ա. Բաղդասարյան, Լևոն Տեր-Պետրոսյան, դիմանկարի փորձ

Ա. Բաղդասարյանը նշում էր. «Կոնֆերանսը, որին մասնակցեցին Հանրապետությունում հայտնի քաղաքագետներ, իրավաբաններ և սոցիոլոգներ, նպատակ ուներ գիտատեսական վերլուծությունների միջոցով պազաբանել վերոնշյալ հարցերը, նշել այն ուղիները, որոնցով հնարավոր է հասնել անհրաժեշտ կոնսենսուսի, լիցքաթափել հասարակական-քաղաքական որոշակի լարվածությունը: Մեր կարծիքով այսպիսի ձեռնարկումները կարևոր քայլ են՝ անհրաժեշտ փոխըմբռնման ճանապարհին» [Օրենք և իշխանություն, 1996, հոկտեմբեր, # 5*]:*

Լևոն Տեր-Պետրոսյանի «Դիմանկարի փորձը» գերազանցապես ընդգրկում էր ժամանակակիցների վկայությունները նախագահի մասին, նրա հարազատների, ընկերների, նույնիսկ՝ ընդդիմախոսների: Դրանք նաև, ինչ-որ իմաստով, կենդանի հիշողություններ էին, որոնք լույս են սփռում Արցախյան զարթոնքի, Խորհրդային միության փլուզման, անկախության շրջանի և շատ այլ դեպքերի մասին. «Թեև այդ 70 տարիները շատ ավելի բարենպաստ էին զարգացման և

ինքնադրսևորման համար, քան նախորդ դարերը, այդուհանդերձ, ազգային հոգեբանության մեջ դրանք չէին կարող ապահովել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք էին՝ ինքնուրույնությունը, պետական պատասխանատվությունը, վստահությունը սեփական ուժերի մեջ, որոնք բնորոշ են պետականություն ունեցող ազատ ժողովուրդներին: Ու թեև ունեցել ենք ազատատենչության համազգային պոռթկումներ, ազատության հազարավոր մարտիկներ, սակայն երբեք՝ Ազատ սերունդ» [Բաղդասարյան, Տեր-Պետրոսյան, 228]: Այլ հարց է, որ այդ պետական պատասխանատությունը մենք չկարողացանք լիարժեք իրացնել, նույնիսկ կարելի է ասել՝ արժանիորեն ստանձնել:

Հետխորհրդային իրականությունը մեզ նետեց տարատեսակ վախերի, տագնապների հորձանուտ՝ հախուռն դատողություններով ու իրարամերժ մոտեցումներով. «Ամբողջատիրական համակարգը ժողովրդի գիտակցության մեջ ժողովրդավարության և ազատականության արժեքների մասին թողել է աղավաղված պատկերացումներ: Ներկայումս մեր հոգեբանությանը բնորոշ են երկու ծայրահեղություններ. Առաջինը ամենաթողության պատկերացումն է, որ հատուկ է հասարակության ժողովրդավարական զարգացման համաշխարհային փորձին անծանոթ և դրա սահմանների ու կիրառման ոլորտների մասին պատկերացում չունեցող մարդկանց, մյուսն իշխանությունների խնամակալով, թելադրող և ստիպող դերի պատկերացումներն են, որ ներհակ են առավել քարացած, միշտ պետության խնամքին ապավինած, նախաձեռնության քիչ ընդունակ խավերին» [Բաղդասարյան, Տեր-Պետրոսյան, 221]:

Ուշագրավ են նաև գրքում առաջին նախագահի քաղաքական հակառակորդներ Պարույր Հայրիկյանի և Աշոտ Մանուչարյանի քննադատական դիտարկումները ժամանակի իրողությունների վերաբերյալ, որտեղ առաջին նախագահին մեղադրում են իշխանատենչության մեջ՝ միաժամանակ նաև ընդգծելով նրա դրական կողմերը: Նույնը նաև Արցախյան հարցում. «Արցախի հարցը դիվանագիտական անբավարար վիճակի մեջ է: Մենք պարզապես ժամանակ ենք շահում, դա էլ վատ չէ, ժամանակ շահելն, ի վերջո լրացուցիչ կյանք է, խաղաղություն, հանդարտություն: Բայց պետք է նայել հեռանկարի տեսանկյունից: Եթե մենք ունենայինք արտաքին քաղաքականության ստրատեգիա, ապա Արցախը կլիներ այդ ստրատեգիայի բաղկացուցիչ մասը» [Բաղդասարյան, Տեր-Պետրոսյան, 111]:

Հաճախ են Արթուր Բաղդասարյանին մեղադրում Լևոն Տեր-Պետրոսյանի մասին հեղինակած գրքի համար: Հանուն արդարության պետք է ասել, որ այդ տարիներին Արթուր Բաղդասարյանը շատերի նման չի թաքցրել իր համակրանքը առաջին նախագահի հանդեպ, նրա մեջ է տեսել պետականության անձնավորումը, մեր զարգացման հեռանկարը և հույսը: Այդ հարցում ներշնչող դեր է ունեցել առաջին նախագահի ոչ միայն քաղաքական առաջնորդության և խարիզմատիկ լիդերի վարքը, այլ նաև գիտնականի կերպարը. «Լևոն Տեր-Պետրոսյան պետական ու քաղաքական գործչի ելույթների անբաժան ուղեկիցն են սթափ բանականությունը, կուռ

տրամաբանությունը, մտքի փիլիսոփայական խորությունը» [Բաղդասարյան, Տեր-Պետրոսյան, 6]:

Իհարկե ժամանակի ընթացքում փոխվում և վերագնահատվում է պատմությունը, բացահայտվում կատարվածի խորքային էությունը և դրդապատճառները, նրանց դերակատարների իրական նպատակադրվածությունը և մոտիվները: Դա վերաբերում է ինչպես Խորհրդային միության փլուզմանը և Արցախյան զարթոնքին, նաև՝ 1996 թվականի նախագահական ընտրություններին, որը տեղի ունեցավ լայնածավալ ընտրախախտումներով և ժողովրդի կամքի բռնաճնշման խիստ գործիքակազմով:

Փաստ է, որ հետագայում Արթուր Բաղդասարյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը դարձան քաղաքական հակառակորդներ: Նույնիսկ առաջին նախագահի մասին գրված գրքում է Ա. Բաղդասարյանը փաստում. «Քաղաքականության մեջ և պայքարում հակառակորդներ բոլորն են ունենում: Եվ դա բնական է: Հակառակորդը, սակայն թշնամի չէ, քանզի գաղափարական անհամաձայնությունը, հանուն սկզբունքի ամենասուր բախումներն անգամ վեր են անձնականից» [Բաղդասարյան, Տեր-Պետրոսյան, 106]:

Մասնագիտական գրականությունում մեծ արժեք ներկայացնող ստավարածավալ այս գրքում հանգամանալից վերլուծության էին ենթարկվում մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնախնդիրները, դատական և իրավապահ մարմինների կազմակերպման ու գործունեության առանձնահատկությունները, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանյան երկրներում: Առաջին անգամ հայերեն ներկայացված էին բազմաթիվ միջազգային կոնվենցիաներ: Գրախոսը՝ անվանի իրավագետ Վլադիմիր Նազարյանն էր: Աշխատությունն, ըստ էության, Արթուր Բաղդասարյանի և Արմեն Երիցյանի գիտական ուսումնասիրությունների զուգադրումն էր, որտեղ ներկայացվում էին մարդու և քաղաքացու իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցերը դատական և իրավապահ մարմիններում [Ерицян]:

Նկ. 9



Ա.Բաղդասարյան, Ա.Երիցյան, Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները դատական և իրավապահ մարմինների համակարգում

Ամփոփ իրավահամեմատական վերլուծությամբ ներկայացվել էին մի շարք զարգացած երկրների դատական և իրավապահ մարմինների կառուցվածքը, կազմակերպման կարգը, նրանց խնդիրներն ու գործառույթները. «Մարդու իրավունքները, դրանց ծագումը, սոցիալական արմատները և նշանակությունը մարդկության պատմական զարգացման հավերժական հիմնահարցերից են: Մարդու իրավունքները չափազանց բարդ ու բազմաբնույթ են» [Բաղդասարյան, Երիցյան, 3]: Գրքում համակողմանի ուսումնասիրվել էին մարդու իրավունքների հիմնահարցերը, դրանց ծագման և զարգացման պատմական ուղենիշները, կապը իրավական և սոցիալական պետության հետ, մարդու իրավունքների սահմանադրական, քրեաիրավական, քաղաքացիաիրավական և վարչաիրավական պաշտպանության խնդիրները, առանձնապես նաև՝ երեխաների և կանանց իրավունքներին և դրանց պաշտպանությանը: Աշխատության արդիականությունը և նշանակությունը պայմանավորված էին նաև նրանով, որ այս խնդիրների արդյունավետ լուծումից մեծապես կախված է իրավական պետության և կայուն քաղաքացիական հասարակության ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում:

Եզրակացություն

Վերոգրյալի համակողմանի վերլուծությամբ պետք է փաստել, որ «Իրավագետների և քաղաքագետների միությունը» 1995թ.-ից մինչև 2000 թվականը առանցքային դերակատարություն է ունեցել նորանկախ Հայաստանի գիտական և իրավաքաղաքական մտքի կայացման գործում: Խորհրդային միության փլուզումից հետո, երբ գրատպությունը զգալիորեն անհասանելի էր, չկային ձևավորված հրատարակություններ կամ դեռևս այդ բնագավառը առավելապես շարժվում էր միութենական պետության իներցիայով, Արթուր Բաղդասարյանի գործուն մասնակցությամբ հրատարակվում էին բազմաթիվ գիտական և հանրամատչելի աշխատություններ: Հենց այդ տարիներին են լույս տեսել իրավունքին, քաղաքականությանը, պատմությանը և այլ բնագավառներին վերաբերող մի քանի տասնյակի հասնող գրքեր՝ այդպիսով նաև հնարավորություն ընձեռվել շատ գիտնականների և հասարակական գործիչների ինքնադրսևորվել և լույս ընծայել սեփական գիտական արդյունքները:

Միության աշխատանքների կազմակերպման և համակարգման գործում զգալի դերակատարություն է ունեցել, անշուշտ, նրա հիմնադիր-նախագահ Ա. Բաղդասարյանը, որի հեղինակային աշխատությունները լայնորեն նպաստել են ոչ միայն ՀՀ պետական կառավարման համակարգի արդիականացմանը, արդյունավետության

բարձրացմանը, այլ նաև ծառայել մասնագիտական աղբյուրներ ակադեմիական հանրության համար:

Գրականության ցանկ

1. **Ա.Բաղդասարյան**, Դատախազություն, հիմնահարցեր, փորձ, անելիքներ, «Զվարթնոց», 1994, 262 էջ:
2. **Ա.Բաղդասարյան,** Դատախազությունը աշխարհի մի շարք երկրներում, իրավահամեմատական համառոտ վերլուծություններ, Եր., Մխիթար Գոշ, 1995, 66 էջ:
3. **Ա.Բաղդասարյան,** «Դատախազության մարմինների աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները», Ավանգարդ, 1994, հուլիս, № 8
4. **Ա.Բաղադասարյան,** 117 հարց ու պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին, Եր., 1995, 272 էջ:
5. **Հ.Խաչատրյան,** ինչպես նախապատրաստվեց Հայաստանի նոր Սահմանադրությունը, Օրենք և իշխանություն, 1997, հուլիս, #7 (14):
6. **Վ. Նազարյան,** Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Եր., Գոշ, 1992թ.:
7. **Ա.Բաղդասարյան,** Դատարանը, դատախազությունը և ոստիկանությունը աշխարհի մի շարք երկրներում, Եր., Մխիթար Գոշ, 1996, 128 էջ:
8. **Ա. Բաղդասարյան,** Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում, Եր., Մխիթար Գոշ, 1996, 192 էջ:
9. **Ա. Բաղդասարյան,** Հարկային մարմինների պետաիրավական կարգավիճակը և գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., Մխիթար Գոշ, 1996, 80 էջ:
10. **Ա.Բաղդասարյան, Ա.Հարությունյան,** ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը, Եր., Մխիթար Գոշ, 1996, 88 էջ:
11. Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, Եր:, Մխիթար Գոշ, 1996թ., նախաբանը **Ա. Բաղդասարյանի:**
12. **Ա. Բաղդասարյան, Լ. Տեր-Պետրոսյան**, դիմանկարի փորձ, Եր. Մխիթար Գոշ, 1996, 232 էջ:
13. **Ա. Բաղդասարյան,** «ՀՀ-ն պետք է ունենա ուժեղ և անկախ նախագահ», Ավանգարդ, 1996, ապրիլ, № 6:
14. **Ա. Բաղդասարյան, Ա.Երիցյան,** Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները դատական և իրավապահ մարմինների համակարգում (տեսության և պրակտիկայի հիմնահարցեր) Եր., Մխիթար Գոշ, 2000, 972 էջ:
15. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., «Իրավունք», 2010:
16. Օրենք և իշխանություն, հատուկ թողարկում, 1996, սեպտեմբեր, # 4:
17. Օրենք և իշխանություն, 1996, հոկտեմբեր, # 5:
18. Օրենք և իշխանություն, 1996 նոյեմբեր, դեկտեմբեր, #5-6 (7):

19. **А. Багдасарян,** Государственно-правовой статус и развитие прокуратуры в Республике Армения: Дис. ... канд. юрид. наук : 12.00.02 Москва, 1995, 189 с.:
20. **А. Багдасарян**, Конституционный статус судебных и правоохранительных органов в Республике Армения: Теоретический и сравнительно-правовой анализ, Дис. ... доктор юрид. наук 12.00.02, Москва, 1996, 355 с.
21. **А. Ерицян,** Права и свободы человека и гражданина в демократическом государстве: система, институты, юридический механизм реализации и защиты, Монография, М., 1998 г.

THE UNION OF LAWYERS AND POLITICAL SCIENTISTS IN THE CONCEPTS OF THE DEVELOPMENT OF ARMENIAN LEGAL AND POLITICAL THOUGHT. AUTHOR'S PUBLICATIONS

Vahe Torosyan
PhD in Law, Associate Professor
Chair of Law
Vaxinak91@mail.ru

Abstract

This article explores the role and activities of the "Union of Lawyers and Political Scientists of Armenia," established during the Republic of Armenia’s independence, with special emphasis on the scholarly contributions of its founder and president, Doctor of Law, Professor A. Baghdasarian. The study presents individual monographs and textbooks and comprehensively studies them.

Studying the national jurisprudence, it became clear that in the newly independent period a significant part of it was developed and created by A. Baghdasarian and through his efforts. The monographs, textbooks, scientific articles, works related to various areas of law authored by him are no less important today. Over time, the analyses and judgments expressed in them have changed significantly due to changes in the current legislation and the development of law, something that is inherent in science. Nevertheless, we believe that the study and summary analysis of the concepts developed by legal scholars, published scientific results and other significant achievements in this field in the modern period of the Republic of Armenia will greatly contribute to the completion of the modern Armenian legal and political thought.

Keywords: Union of Lawyers and Political Scientists, prosecutor's office, court, law enforcement agencies, police, constitution, legal and political thought.

Ներկայացվել է՝ 31.03.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 19.05.2025թ.